



ԵՐԿՈՒՆԱԲԹԻ, 3 ԱՊՐԻԼ, 2023

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ (միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚մ. եւ ողորմեալս քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՍՈՍ 27 ԱՂՈԹՔ ԵՒ ՕՐՀՆԵՐԳ ԱՍՏՈՒԾՈՅ

Տէրն է լոյսս եւ փրկութիւնս, որմէ՛ պիտի վախնամ ես.
Տէրն է կեանքիս ապաւենը, որմէ՛ պիտի դողամ ես:
Չար մարդիկ, որոնք հետս թշնամացած՝ զիս կը հալածեն,
փորձեցին միսս ուտել, սակայն իրենք փկարացան եւ ինկան:
Նոյնիսկ եթէ ամբողջ բանակ մը վրաս յարձակի, սիրտս վախ պիտի չզգայ,
նոյնիսկ եթէ ինձի դէմ ճակատամարտ յարդարուի՝
դարձեալ Աստուծոյ պիտի վստահիմ:
Մէկ բան խնդրեցի Տիրոջմէն, եւ սա է աղաչանքս.
կեանքիս բոլոր օրերուն Տիրոջ փառն մէջ բնակիլ,
ըմբռնել Տիրոջ վայելչութիւնը, եւ զինք պաշտել իր փաճարին մէջ:
Նեղութեան ժամանակ իր յարկին փակ պիտի պահէ զիս,
իր փաճարը զիս պիտի պապսպարէ, ամուր ժայռի վրայ պիտի կանգնէ զիս:
Եւ հիմա գլուխս բարձր պիտի կանգնիմ
զիս շրջապարող թշնամիներուս դէմ,
եւ ուրախ աղաղակով զոհեր պիտի մատուցանեմ Տիրոջ փաճարին մէջ,
պիտի երգեմ ու նուագեմ իրեն համար:
Ով Տէր, լսէ աղաչանքս, երբ քեզ օգնութեան կը կանչեմ,
ողորմէ՛ ինձի եւ պապաստիսան փութ:
«Զիս փնտրեցէք», ըսիր դուն,
եւ իմ սիրտս քեզի պապաստիսան փութս.- «Քեզ կը փնտրեմ, Տէր»:
Ինձմէ երես մի դարձներ, բարկութեանդ մէջ մի հեռանար ինձմէ՝ ծառայելդ:
Դուն՝ որ ինձի օգնական եղար, մի մերժեր զիս,
եւ մի լքեր, ով Աստուած, իմ փրկիչս:
Նոյնիսկ եթէ հայրս ու մայրս զիս լքեն,
գիտեմ որ դուն, Տէր, զիս պիտի ընդունիս:
Տէր, քու ճամբադ տրվեցուր ինձի,
եւ որպէսզի թշնամիներս չուրախանան՝
շիտակ ճամբուն մէջ առաջնորդէ զիս:
Զիս մի մաքնէր հակառակորդներուս քմահաճոյքին,
որոնք սուտ վկայութիւն կու տան եւ ինձի դէմ թոյն կը թափեն:
Ես կը հաւատամ որ Տիրոջ բարութիւնը պիտի փեսնեմ
ողջերու աշխարհին մէջ:
Յոյսդ Տիրոջ վրայ դիր, գորացիր եւ քաջ եղիր.
յոյսդ Տիրոջ վրայ դիր:

ՇԱՐԿԱՆ- ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուրք Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:



ԱՂՈԹՔ ԵՒ ՕՐՀՆԵՐԳ ԱՍՏՈՒԾՈՅ

Իրավիճակ մը, կացութիւն մը, որուն մէջէն կ'անցնին իւրաքանչիւրս: Ահա Դաւիթ կը դառնայ խօսնակը, ներկայացուցիչը, թարգմանը իւրաքանչիւրիս: Իրավիճակ մը, որ սակայն, երբ կ'անցնինք ելք մը կը փնտռենք անկէ դուրս գալու, փրկութիւն մը անկէ ազատուելու: Իրավիճակ մը, որ երբ սկսի կամաց կամաց ծանրանալու մեր վրայ, ահա այն արեւն մեր միտքերը կը սկսին խաւարիլ, աչքերը խաւարիլ: Կը սկսինք լոյսի կարիքը գգալու: Կացութիւն մը, որ կը սկսի վախը, անորոշութիւնը, սարսափը մեզ պարել: Այսպիսի կացութեան մը մէջ Դաւիթ կու գայ ամբողջական վարահութեամբ խոստովանելու եւ վկայութիւնը փալու, թէ Տէրը ինքն է լոյսն ու փրկութիւնը, ու մանաւանդ՝ կեանքիս ապաւենը, ուստի որմէ՛ պէտք է վախնալ կամ դողալ: Ոչ որ: Նոյն արտայայտութիւնը Պօղոս Առաքեալ առիթով մը կ'արտայայտուի ըսելով. «Եթէ Աստուած մեր կողքին է, ով իցէ մեզ հակառակ»: Տակաւին, «Մեզ ով կրնայ Քրիստոսի սերէն բաժնել: Ոչ սուրը, ոչ հուրը, ոչ մահը, ոչ մէկ բան»: Այս բոլորը կրնան ըլլալ երբ ամբողջական վարահութեամբ կ'ապուած կ'ըլլանք Աստուծոյ: Միւս կողմէ, երբ Աստուծոյ լոյսն ու փրկութիւնը ունինք, չի նշանակեր որ նեղութիւն պիտի չունենանք: Ընդհակառակը, նեղութեան եւ դժուարութեան պահուն, Աստուծոյ լոյսն ու փրկութիւնը մեր մտքերուն պիտի փայլայ լոյսը չշփոթուելու, փրկութիւնը՝ չի վախնալու: ապաւենը՝ չյուսահապելու: Սա կը նշանակէ, այլեւս խաւարը մեր վրայ ազդեցութիւն չունի, յուսահապութիւնը, ընկճուածութիւնը փեղ չունին մեր կեանքերուն մէջ: Այս բոլորը, սակայն, կու գանք ըսելու, «Խօսքով դիւրին է», բայց ինչպէս կեանքի վերածել: Սիրելիներ, ահա թէ ինչու Դաւիթ ինք կը դառնայ ներկայացուցիչը, խօսնակը, ցոյց փալու համար թէ ինչպէս արդեօք կարելի է ամբողջական վարահութիւն ունենալ Աստուծոյ վրայ: Մանաւանդ՝ այնպիսի վարահութիւն մը, որ ոչ միայն սովորական նեղութիւն մը, այլ մինչեւ իսկ ամբողջ բանակ մը եթէ վրան յարձակի, կամ ճակատամարտ յարդուի, դարձեալ Աստուծոյ պիտի վստահի: Կեանքի փորձառութիւնը Դաւիթ ունեցաւ երբ գնաց պարտերազմելու Գողիաթին դէմ: Այդ ալ միայն պարսափկով: Անոր համար ալ Դաւիթ պիտի ըսէր Գողիաթին, ես չեմ որ քեզի դէմ կը պարտերազմիմ, այլ՝ Ամենազօր Տէրը Ինքն է, որ քեզ իմ ձեռքս պիտի յանձնէ:

4-5 հմր Կը ներկայացնեն Դաւիթը խնդրանքը: Գիտէք մեր ծնունդէն սկսեալ, ամէն մէկ ժամանակահատուած միշտ ալ խնդրանքներով լեցուն է մեր կեանքը: Նորածին երախայէն սկսեալ մինչեւ մեր վերջին օրը կեանքին: Տակաւին, չըսելու համար, ամենօրեայ ցանկ մըն է որ կը պարտաւորենք եւ Աստուծոյ կը ներկայացնենք: Յաճախ նաեւ կը նեղուինք երբ մեր այդ ցանկի մէջ եղածները չեն իրականանար: Կամ ուշ կ'իրականանան: Անկեղծ ըլլալու համար մեր արտայայտութեան մէջ, շարք յաճախ, չըսելու համար միշտ, մենք շեշտը շարք աւելի խնդրանքին վրայ կը դնենք, այսինքն՝ փրուելիքին, քան փրուողին: փրուողին պարզապէս շնորհակալութիւն կը յայտնենք: Որքանով, Դաւիթի նման, մեր այդ խնդրանքներու ցանկին վրայ կամ այն նոյն խնդրանքը ինչ որ Դաւիթ կը ներկայացնէ, ինչպէս նաեւ Պօղոս Առաքեալ: «Մէկ բան խնդրեցի Տիրոջմէն», «մէկ փափաք ունիմ», «Կեանքիս բոլոր օրերուն մէջ Տիրոջ փայլ մէջ բնակելու», «Քրիստոսի հետ ըլլալու»: Արտայայտութիւն մը որ փարօրինակ կրնայ թուիլ: Կրնանք ըսել. այսինքն՝ ուրիշ բան չունիմք ընելիք: Գործ ունինք, փուն փեղ ունինք, պարասխանապարտութիւն ունինք: Ի՞նչ կը նշանակէ կեանքիս բոլոր օրերուն մէջ: Կը նշանակէ ամենօրեայ կեանքս Աստուծոյ սկսելու, Աստուծոյ սպրելու, Անով լեցնելու ժամերս: Մի մտախոհուիք, միւս պարասխանապարտութիւններս կրնամ ընել, առաւել եւս կ'ընեմ առանց մտախոհուելու, առանց վախի: Լուսաւոր մտքով: Իսկ Պօղոս Առաքեալի փափաքը Քրիստոսի հետ ըլլալը: Մէկ այլ ըսելու եղանակ է: Իսկ Դաւիթի ուզածը, որպէսզի Աստուծոյ գեղեցկութեան վայելքը ունենալու համար: Այլ ուրիշ ի՞նչ վայելուչ բան կայ, եթէ ոչ Աստուծոյ ներկայութիւնը, Անոր գեղեցկութիւնը: Երկրորդ, նեղութեան ժամանակ պաշտպանութիւն գրնելը, եւ զինք հաստատուն պահելը:

6 հմր իբրեւ արտայայտութիւն այս բոլորին գլուխը բարձր պիտի կանգնի թշնամիներուն դիմաց, եւ ուրախութեան ու շնորհակալութեան երգեր երգելու Տիրոջ:

7-10 հմր անգամ մը եւս խնդրանք կը ներկայացնէ, որ Տէրը լսէ աղաչանքը երբ օգնութեան կը կանչէ, ողորմութիւնը կը խնդրէ: Կը խնդրէ որ երես չդարձնէ իրմէ, իսկ բարկութեան պահուն չհեռանայ Իր ծառայէն: Մանաւանդ՝ երբ արդէն փորձառութիւն մը ունեցած է Դաւիթ, «Դուն որ ինձի օգնական եղար»: Ան նաեւ ունի այնպիսի վարահութիւն մը, որ նոյնիսկ եթէ իր ծնողները զինք լքեն, վստահ է, որ Տէրը զինք պիտի ընդունի:

11-12 հմր «Ճամբաներդ սորվեցուր արտայայտութիւնը, կը նշանակէ կեանքի ապրելակերպը: Նաեւ Աստուծոյ երթալու ճամբան»: Քրիստոս պարզ բացատրութեամբ ըսաւ. «Ես եմ ճամբան, դէպի

Հայրը գացող»: Այդ ճամբան սորվելու, այդ ճամբան ճանչնալու, այդ ճամբով երթալու: Այսօր հազար ու մէկ ճամբաներ կ'որոնենք, բայց ահաւասիկ յստակ է, որ Քրիստոս կ'ըսէ. «Մէկ ճամբայ կայ», այդ ալ Քրիստոս ճամբան է: Սորվեցուր այդ ճամբադ, որպէսզի թշնամիները չուրախանան: Մանաւանդ՝ կը խնդրէ որ շիտակ ճամբուն մէջ առաջնորդէ, որ կը նշանակէ, ուրեմն սխալ ու ծուր ճամբաներ ալ կան: Կը խնդրէ որ զինք թշնամիներուն քմահաճոյքին չմատնէ, որոնք սուտ վկայութիւն եւ թոյն կը թափեն: Այս խօսքը յիշեցում է Քրիստոսի մասին, երբ Իր դէմ սուտ վկայութիւն կու տային, կ'ամբաստանէին:

13 հմր Ահա մէկ այլ ուրիշ վստահութիւն մը, որ կը հաւաքայ որ պիտի տեսն Տիրոջ բարութիւնը ոչ միայն այս երկրի վրայ, այլ նաեւ ողջերու աշխարհին մէջ: Այսինքն՝ յաւիտենական կեանքին մէջ:

14 հմր վերջին փողերը անգամ մը եւս կը յիշեցնէ, «Յոյսդ Տիրոջ վրայ դիր, քաջ եղիր գօրացիր»:

Պ*ահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի քանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:*